

410577 մէդր, և 66 աստիճան լայնութեան տակն է 411500 մէդր :

Այս չափուց բազգատութենէն իմացուեցաւ որ Երկրիս գնտակերպին հասարակածային տրամագիծը կ'առաւելու քան զբենուային տրամագիծը իրը $\frac{1}{500}$ մասամբ իր Երկայնութեանը :

Արդ այս է ճիշդ ձեւ՝ ճիշդ թերագծութեան աստիճանն, որ հոսանուտ կամ թոյլ նիւթերէ բազկացեալ գունտ մը կ'առնու եթէ իր առանցիցը վրայ քսանբչորս ժամուց մէջ թաւալումնունենայ:

Այսպէս կը տեսնուի որ զիտողութենէ ստուգուած Երկրիս ձեւ՝ նոր ապացոյց մըն է իր օրական թաւալմանը :

Ահաւասիկ բենուային և հասարակածային տրամագիծից Երկայնութիւնը, ըստ ճշգագոյն և նորագոյն հաշուից .

Հասարակածային շառաւիլ	6377398	մէդր
Բնեռային	6356080	"
Տարբերութիւն	21318	"
Քառորդ հասարակածին	10017594	"
Քառորդ բնեռի	10000856	"

Տարբերութիւն ընդ մէջ միջորէական թերագծին և հասարակածային բոլորակին է 67 հազարմէդր :

Երկրիս գնտակերպին ճիշդ գնտի մը ձեւէն ունեցած խոտորումը այնչափ ալրդտիկ է որ եթէ Երկիրս գունտ մը ձեսցուի 300 հազարորդամ. հասարակածային շառաւիլով, բնեռաց շառաւիլն ալ կ'ըլլայ 299 հազարորդամէդր, և այս տարբերութիւնը բոլորովին անզգալի է աշաց : Ուստի կրնայ Երկիրս կատարեալ գնտաձև մոտածուիլ գրեթէ ամեն պարագայից մէջ, որուն քառորդ միջորէական կ'ըլլայ 10000000 մէդր, և շառաւիլն 6366 հազարամ. բայց աստեղաբաշխը Երբ Երկրիս շառաւիլն Երկայնութեան միութիւն կ'առնուն, կ'իմանան միշտ հասարակածային շառաւիլը, որուն ճշգրիտ չափն է 6377398 մէդր :

Յունիս .

Ի յունիս ամսոյ արժան է որ քան զյունիսոյս հասարակն յառաջ¹ ըզպատրուսած այգին փորեն աղէկ՝ Երկու Երեք հետ . 'ի մարտի հասարակէն մինչեւ 'ի յունիսի հնգետասաներորդ օրն . և զակնուռքն՝ որ 'ի մացրանն եւլեալ լինի՝ հան . և 'ի մատղաշ նոր տունկն քչիկ ուռ թող, մէկ կամ Երկու, որ չվատուժցնէ զինքն զառաջի ուռն . և զերկուսն թող և յերրորդն կտրէ : Եւ 'ի յունիսս է պարտ ծայրատել զայգին անպատճառ . թէ ոչ որյամէ այլ աւերի : Եւ յայս ամիսս այլ է պարտ ակնբցել և զտակքն ծածկել որպէս յառաջն գրեցաք . և յայս ամիսս առ զվայրի թաւալ թուզն որ 'ի վայր գայ, և շարոց արա և կախէ 'ի տանութղենին . նա չտայ թափել զպտուղն . արգիլէ և շատ բեր տայ առնուլ, և ճարտար հացնէ զթուզն : Եւ 'ի յունիսս է սատրել զհկիսնն և զտուղտն, և զիստն որ յունարէն ասեն ֆարիեօն, որ է հուֆարիօն² :

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

¹ Յառաջ քան գլէմն յունիսի :

² Հայերէն գոմերուածն ըստւած կարծուի :